

AA0006831333



UC SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY



**ՏԵՍԹԱՆՆԵՐ**  
(ԽԱՂԵՐ)

**Ռուսիոյ,  
Ղաբոնի,  
Իտալիոյ,  
Թուրքի,  
Հայրիկի,  
Ղուսարարի և  
Պալքաններու  
փոխադարձ պատասխանները  
նաև  
Սիրահարական կտոր մը**

**Գրեց՝ Ա. ՕՆԱՆԵԱՆ**

**Տպարան  
ՌՈՒԲԷՆ Ն. ԱՄԻՐԽԱՆԵԱՆԾԻ  
Ֆրէզնօ, Բալ.  
1914**

## ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ ՀԵՂԻՆԱԿԷՆ

1903ին երբ Ռուսը Հայոց վանքերուն կալուածները կը գրաւուէր բռնի կերպով, այն ատեն ամբողջ Հայերուն սիրտը կարծես կրակ ինկաւ, ինչու որ, աշխարհին վրայ միայն այդչափ բան ունէին ան ալ ձեռքէ կ'ելլէր:

Եւ երբ կարգ մը Ռուս պաշտօնեաներ զօրքերով էջմիածին կը պաշարէին ու Հայրիկէն կը պահանջէին ինչ որ ունէր, իսկ Հայրիկ մերժեց անոնց առաջարկը ու ըսաւ. "Ռուսը հոս մէկ բան իրաւունք չունի առնելու, բացի ինծի տրուած նշաններէն" ու անմիջապէս հանեց իր վըզէն ու նետեց մէկ կողմ, "Այդ է ձեր իրաւունքը միայն կրկնեց Հայրիկ իր խօսքը":

Յետոյ անոնք ստիպուեցան Հայրիկին նեղութիւն տալ, գացան կոտորեցին ու 8 հազար ռուպլի տարին: Այն ատեն Հայրիկին բան մը չէր մընար ընելիք եթէ ոչ լալ ու անիծել իր թշնամիները:

Ադկէ քիչ ժամանակ վերջը, կարծես Հայրիկին անէծքը բռնեց, 1904ին Ճարոն Ռուսիոյ դէմ ցըցուեցաւ պատերազմիլ Մանչուրիային համար:

Այն ժամանակ ես ալ ուզեցի կարգ մը խաղեր ու ոտանաւորներ գրել Ռուսը վար զարնելու նըպատակաւ, այդպիսի աննշան ու կռապաշտ ազգի մը առջեւ:


Եւ երբ քանի մը համարներ գրեցի, նոյն քաղաքի բարեկամներս ստիպեցին որ աւելցնեմ: Ու ես աւելի հետաքրքրուեցայ ու շարունակեցի մինչև որ բաւականաչափ գրեցի: Մակայն պարագաներու բերմամբ այլևայլ պատճառներով յետաձգուեցաւ հրատարակելու: Բաւական ժամանակ վերջ իտալ. և թուրք պատերազմը սկսաւ, ես նորէն սկսայ քայլ առ քայլ խաղերս շարունակել, անկէ յետոյ եկաւ Պալքանները թուրքին հետ: Խաղերն ալ կը շինուէին մինչև Լօնտոնի վեհաժողովին վերջացաւ խաղերը:

Ա. ՕՆԱՆԵԱՆ

Թրոյ, Նիւ Եօրք  
1914

SRLF  
URL

OC/46698590



**ՏԵՍԹՆՆԵՐ**  
(ԽԱՂԵՐ)



**Շարադրուած**  
**Ռուս-Ղարնական Պատերազմի**  
**Եռթիւ**

Հազար ինը հարիւր չորս թըւականին,  
Լուր մը տարածուեցաւ ամբողջ աշխարհին,  
Պատերազմը ըսկըսաւ ճարնն Ռուսին,  
Արիւնի գոյն տըռեց արեգակ լուսին:

Արեւելքէն ելան երկու հատ մեծ սուր,  
Մէկը կայծակէ, մէկն ալ հըրեղէն թուր,  
Մանչուրիա Փորթարդը շուտով ըլլայ լուր,  
Ռուսը պիտի առնէ Մանչուրիայէն մէկ թաս ջուր:

Generated on 2016-07-22 11:07 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0006831333  
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-google

Ըսկըսաւ կըռիւր քըսանըհինգ յունուարին ,  
Արիւնով ծածկըուեցաւ սկիզբն այս դարին ,  
Տիեզերքին մէջ՝ ալ խաղաղութիւն շըկար ,  
Դիակներ թափուեցաւ երկնքէն ի վար :

Արիւններ սկըսաւ՝ ծովը կը ցողայ ,  
Արևելք արևմուտք հիմէն կը դողայ ,  
Դիակներ արեան մէջ սարսափովը կը լողայ ,  
Մանշուրիա Փորթարդը սուրեր կը խաղայ :

Ճարոն . Արիւն հոսումներով կայներ է մուժը ,  
Առեր եմ Ռուսաց ծովային ուժը ,  
Ոմանք ձուկը կերաւ ոմանք ալ ջուրը  
Գերի բռնածս ալ բոլորը պիտ քաշեմ սուրը :

Ռուս . Ինձի արջ կը կոչեն ես կամաց կելլեմ ,  
Չինաստան ճարոնը մէկտեղ կը կըլլեմ ,  
Երկինք և երկիր կը դողան երբ ոտքի կելլեմ ,  
Մանշուրիա Փորթարդը խաշեր պիտ տնկեմ :

Ճ . Ինձի ճարոն կ'ըսեն ես քեզ կը յաղթեմ ,  
Երեսուն ու երկու ակռադ մէկէն կը քաշեմ ,  
Ճարոն կըսեն մեզ շատ եաման շար ենք՝  
Մանշուրիա Գորիա կ'առնենք՝ աչքերդ քոռ են :

Ռ . Սպասէ պատերազմին՝ փըշեր եմ պոռին ,  
Հարիւր հազար զօրքերս ելեր են շորէն ,  
Այսպէս բան ճարոնը շէ տեսեր մօրէն ,  
Մանուկները պիտ հանենք մօրերուն փորէն :

Ռ . Մէկ անգամ էմր ընեմ ճարոնը կը պատեն ,  
Երկնից աստղերէն զօրքերս շատ են ,  
Եթէ հրաման ընեմ մէկ ժամէն կուտեն ,  
Մանշուրիային հետ ճարոնն ալ հիմէն կը կործանեն :

Ճ . Խորտակուած նաւերըդ պիտ քաշեմ էտէն ,  
Դէմըդ պիտի կապեմ երկաթէ պատան ,  
Գիտես որ կախարդ ճարոնի տէտէն ,  
Տասուերկու բանակը կը պահեն էտէն :

- Ռ. Տէտէնական սուրս արիւնը թաթխեմ,  
Աղուէսի պէս վիզէդ բռնեմ կը խեղդեմ,  
Լաւ բոլորդ նայիր ո՞վ է քեզի դէմ  
Ինծի Ռուս կ'ըսեն՝ շալիկ երկաթ եմ:
- Ճ. Դուն քու առաջը փորեցիր հորը,  
Տասուերկու թըրէն գերի կը բռնեմ օրը,  
Շատ Ռուս ջարդեցի լեցուցի հորը,  
Արջն ալ եկաւ ինկաւ ծաբոնին թողը:
- Ռ. Փորթարդը Գորիա Մանչուրիա արան,  
Եռեսուն հազար զօրքերդ թափեցի տէրան,  
Ալ ծաբոնին վերջն է հատեր է փարան,  
Կը ջարդեմ ծաբոնը ձրգեր եմ սըրան:
- Ճ. Տակըդ փորեր եմ պիտ իյնաս խորուն,  
Պատրեագմը ըսկսեր ենք մենք հիմա չորուն,  
Շատ Ռուս ջարդեցի կըռիւի չորուն,  
Մանչուրիա Փորթարդը պիտ մընայ՝ որո՞ւն:
- Ռ. Օձու պէս կելլեմ ես գարնան չողուն,  
Չին ծաբոնի հողը պիտ կտրեմ արիւն,  
Ալ ծաբոնի վերջն է քսաներորդ դարուն,  
Մանչուրիա Փորթարդը պիտի մընայ որո՞ւն
- Ճ. Դուն հիմա պէտք է գահէդ վար իյնաս,  
Փախիր մըկայ ծակ մը գտիր որ մըտնաս,  
Դուն կուտաս բոլոր աշխարհին վընաս,  
Չըլլայ որ յաւիտեան պատերազմ բանաս:
- Ռ. Ռուսաստանէն ելան տասուերկու բանակ  
Չեռքերնին առեր են մէյմէկ հատդանակ  
Չին ծաբոնի վրայ երթալ կը ջանանք  
Ընդհանուր աշխարհի աշքեր կը բանանք:

- Ճ. Գիտեմ որ Մանչուրիա Քորիա կը սիրես  
 Նըպատակդ է՝ ընդհանուր աշխարհը տիրես  
 Բոլոր թագաւորնին հըպատակ ընես  
 Ամբողջ տիեզերքին վրայ դուն թագաւորես :
- Ռ. Ամպերու պէս գոռում գոշում թող ելլեն  
 Եօթը գլխէն դեւեր ունիմ ճարոնը կը կըլլեմ  
 Բոլոր թագաւորները կուզեն դէմս թող ելլեն  
 Ուր տեղ մտնեմ այնտեղ պիտ ընեմ թալան :
- Ճ. Կայծակի պէս շիներ եմ նաւերուս ուժը,  
 Ամէն տեղեր կուզէ թող երթայ լուրը,  
 Արեւելքի Ռուսաստան պիտ քաշեմ սուրը,  
 Պիտի զարնեմ բազուկիդ հըրեղէն թուրը :
- Ռ. Օձի պէս գետնին տակէն կը սողամ,  
 Առիւծի պէս լեռանց մէջէն կը պոռամ,  
 Կայծակի պէս օդին մէջէն կը գոռամ.  
 Երկրաշարժի պէս գետնին մէջէն կը բխսամ,
- Ճ. Անունդ բարձրացեր ելեր դէպի օդ՝  
 Զըլլայ որ գաս ճաբոնին թնդանօթին մօտ  
 Փորթադրէն եկաւ շատ արիւնի հոտ,  
 Մէկէն բռնեցի հարիւր քառասուն թընդանօդ :
- Ռ. Շատ անգամ արցունք թափեց Հայոց մայրիկը  
 Մայր աթոռէն թռցուցի Հայոց արծիւը  
 Զարդեցի ժողովուրդը ալ շըկայ թիւը  
 Երբ վանքը պաշարեցի լացուցի Հայոց Հայրիկը :
- Ճ. Սասանի երկինք՝ կործանին նաւեր,  
 Թոկօն վարժուած է կընէ այս խաղեր,  
 Ռուսաստան պիտ ըլլայ փրլատակ աւեր,  
 Տըկար նաւերդ իմուն դէմս շեն բաւեր :
- Ռ. Կերակուր կ'ուտեմ աղի անհամ է,  
 Նըշաններ կախեր եմ փուշ ու տատաշ է,  
 Ճաբոնը մարդը ոտքէն կը գամէ  
 Օեամա զիս ալ շուան ի վար կը կախէ :



- Ճ. Նաւերդ ջարդեցի փշրեցի պիթուն ,  
 Կորաւ թագդ գահէդ վար ինկիր դուն ,  
 Վիրաւոր ճեներալդ ինկաւ գերութիւն ,  
 Քրսան տոկթորներով կընեն քննութիւն :
- Ռ. Ասիայէն եկաւ նաւերս Պալթիկ  
 Խորտակուած նաւերդ էտէն պիտ բարդենք  
 Չինաստան ճարոնը շուտով պիտ ջարդենք  
 Պիտի տեսնեն ասի աշխարհի մարդիք :
- Ճ. Ով կիանոսը առաջս կըլլայ հընազանդ ,  
 Մէկ հարուածով նաւերդ ըրի քարուքանդ ,  
 Ճարոն անունն ելեր միայն կըռապաշտ  
 Ռուս բանակն ալ ինծի եղաւ հնազանդ :
- Ճ. Սուրը ձեռքս եղեր եմ Օեամա խասապ  
 Ջարդեցի դիակներ ալ շը կայ հիսապ ,  
 Թող զօրապետներդ առաջս ըլլան զինաթափ :  
 Մանշուրիային համար ինչո՞ւ եղաք յուսախար ,
- Ճ. Կռապաշտ էր , Քրիստոնեայ եղաւ ժամերնիս  
 Արեւելք արեւմուտք գընաց նամերնիս  
 Հարիւր քրսան պատրաստ եղաւ նաւերնիս ,  
 Կ'ուզէ հիմա աշխարհը թող գայ դեմերնիս ,
- Ճ. Մէկ հարուածով թոկոն աշխարհը քանդեց ,  
 Սուրը ձեռքը արիւններու մէջ թաթխեց :  
 Քսան ժամէն բոլոր նաւերդ յաղթեց ,  
 Բոլոր աշխարհը լուրը նորէն տարածեց :
- Ճ. Թոկոն բռնեց շորս հատ Ռուս զօրապետ ,  
 Երեք հազարներ թոռը ինկան անոնց հետ ,  
 Լըռեց Չարը լացաւ ինկաւ գահէն վար ,  
 Թողէք ես ալ զարնեմ գլուխս ապառաժ քար :
- Ռ. Ամէն կողմէն ինծի կուգայ միշտ հարուած ,  
 Չրկայ ճար մը փախելու ուռկանք է լարուած .  
 Մըկէի փրոռուած գաւառն ալ ինձմէ առած  
 Աւազի պէս դիակներ արեան հետ խառնուած :

- Ճ. Ռուսաստան սուգ ու խաւար պատեցին ,  
Թշուառ Չարին սիրտը արիւն վազեցին ,  
Բեդրսպուրկէն Մկրի հեռագիրը քաշեցին ,  
Թոյն խըմել կ'ուզէ հիմա Քըրօֆէդկին
- Ռ. Թնդանօթ կարճակէր ճարոն զօրապետ  
Մըռնշելով կերթար դէպի շագակեր  
Աւազի պէս դիակներ տարաւ իրեն հետ  
Արիւնով ներկուեցաւ եզերք շագակեր :
- Ճ. Անունս եղեր հիմա առիւծ Օեամա ,  
Նստեր եմ Չարին հետ կը խաղամ տամա ,  
Շաշուրմիշ ըրիր խաղդ՝ կերեւի հիմա ,  
Սրտիդ դէմ պիտ զարնեմ տասուերկու խամա :
- Ռ. Ասիաի վրայ եղեր էի միապետ ,  
Օեամա մեր ուժերը գիտէր կէտ առ կէտ ,  
Չը դիմացանք մենք օր մը ճարոնի հետ ,  
Ամէն օր մղուեցանք Մանշուրիայէն ետ :
- Ճ. Դադրեցաւ կռիւը երևցաւ ծիածան ,  
Խաղաղութեան լուր կուտայ մեզ Եւրոպան ,  
Հազար միլիոն շիտայ եթէ Ռուսիան ,  
Չեմ ազատեր վիզը երկրթէ լըծան :
- Ռ. Անթիւ դիակներ ինկան միթներ է հավան ,  
Վաթսուն հազար գերի վաթսուն մորթուան ,  
Իմ երկիրս խաւար պատեց այս տարուան ,  
Փորթարդրն ալ ձեռքէ գընաց այս աշնան :
- Ճ. Աշխարհէն խաղաղութիւն կը խնդրես ,  
Բոլոր երկիրդ գրաւի տակ դրեր ես ,  
Այս երկրին վրայ դուն խայտառակ ես ,  
Կռիւ ընելու բնաւ վարժուած չես :
- Ռ. Վերջացաւ կռիւը եղանք յուսախար ,  
Բոլոր զօրապետներս ինկան եղան զինաթափ ,  
Հարիւր հազար զօրքերս կոտորուեցան այնչափ  
Օեամա դրեց մեր վըզերուն մէյմէկ կապ :

- Ճ. Ներկուեցաւ ծովուն երեսի փրփուր ,  
Քառասուն նաւերով կերթաւ դու դէպ ո՞ւր ,  
Ճարոն առեր դէմդ մէկ հըրեղէն թուր  
Քեզի շի տար Մանչուրիայէն թաւ մը ջուր :
- Ճ. Մանչուրիա առիր կը կարծես խումար ,  
Ճարոնին վրայ կայ առիւծի տամար ,  
Շատ մեծ կը խորհիս զիս յաղթելու համար ,  
Չես կրնար յաղթեր լեռնցի յիմար :
- Ռ. Վառօդ գնդակ ունիմ բոլորը քեզի ,  
Հըրացան թնդանօթ մի արձակեր մեզի ,  
Տարի մը հետդ ես կռիւ ըրի ,  
Քառասուն հազար զօրքերս բռնեցիր գերի :
- Ճ. Շուտով ատկից ճամբայ գուտ փախիր ,  
Մանչուրիա Փորթարդր ինծի ըրէ թախիր ,  
Ամբողջ Ռուսաստան դառձընեմ մոխիր ,  
Քրօփաթկըն քաջդ , յաղթեցինք ախրը :
- Ռ. Գիտեմ որ հիմա ճարոնը շատ քաջ է ,  
Ռուսն ալ ճարոնին վրայ շըլլայ որ հաշէ ,  
Բոլոր աշխարհը վկայ Ռուսը վատ է ,  
Իր հըպատակ ազգերը բոլորը կատէ :
- Ճ. Ճարոնցի ենք գիտենք պատերազմի հալէն ,  
Չօրքերդ հատան Փորթարդր գալէն ,  
Բերան ունիս ուտելու Մանչուրիաի մալէն ,  
Բոլոր տէրութիւնները վըրադ պիտ քալեն :
- Ռ. Հին ատենէ ի վեր պատերազմի վարժ ենք :  
Ալէկոծ ծովերու պէս պիտի շարժենք ,  
Չինաստան ճարոնը մեզի պիտ բաժնենք ,  
Բոլոր աշխարհին հետ պիտ պատերազմինք :
- Ճ. Մանչուրիա Փորթարդր կայներէ տուման ,  
Ճարոնին թագաւորը ըրաւ հըրաման ,  
Կէս միլիոն զօրքերդ կը ջարդեմ լըման ,  
Ռուս զօրապետներդ կը կանչեն եաման :

- Ռ. Ռուսը նամակ մը գրեց Ճաբոնին սիրով,  
Մենք ասոր վրայ խորհած ենք շատ երկար օրով  
Մանչուրիա Փորթարդը բոլորը ձեզի  
Թող որ Ռուսաստան երթանք ճամբայ տուր մեզի :
- Ռ. Աշխարհը մեզ դրեր կ'օրրէ օրանը  
Նորէն բացաւ Ռուսը արջու բերանը  
Թող գան հիմա դէմս Մանչուրիայի տիրանը  
Պիտի քաշեմ ես ալ Թոկոյն շըուանը :
- Ճ. Կտրեցաւ շունչդ բացիր բերանդ,  
Թոկոն կուզէ ութը միլիոն դրամը,  
Ճաբոն եղեր Մանչուրիայի տիրանը,  
Տաճիկ շեմ որ գլխուս կարդաս Գուրանը,
- Ռ. Արիւններ Թող ծածկեն ծովային ալիք,  
Ռուսը բերնով շտար Թոկոյին տալիք,  
Տեսնաս հիմա դուն ալ քու գլխուն գալիք,  
Ռուսը ըրիր դուն աշխարհին խաղալիք :
- Ճ. Հիմա զօրապետներդ կը փոխես ամէն ամսեայ  
Ձարը Թող դէմս գայ հագեր է սիեայ,  
Կուզէ Թող գայ դէմս ամբողջ Ասիա,  
Ճաբոն զօրապետները եղան ապառաժ խաեայ :
- Ռ. Արեւելքէն կատղած սէլ մը ըլլայ ի  
Մըռնջելով աշխարհի վըրայ ելլէի,  
Ամբողջ Եւրոպն ու Ճաբոն կըլլէի  
Անոնց բոլորին Թագաւոր ըլլայի :
- Ճ. Ովկիանոսին մէջը կըլտապ մ'ըլլայի  
Վիչապի մը պէս յատակէն ելլէի  
Արեւելքէն գալած սէլը կըլլէի  
Իմ ոտքերս բոլոր Ասիա դընէի :
- Ռ. Կրակ ու բոց կտրան իմ բոլոր գահը,  
Անձնազոհ ըլլալ կուզեմ Թող գայ իմ մահը,  
Կոտրեցի երեք հարիւր հազար հայը,  
Ձը մընաց ինձի անմեղ արիւնի ահը :

- Ճ. Ըսկըսար Եահուտին, Հայերը ջարդես  
Ով ըսաւ որ դուն ալ աշխարհի մարդ ես  
Քեզ տեսնեմ ճարոն դուն կըռապաչտ ես  
Այս նուաստը աշխարհի վրայէն յաղթես :
- Ռ. Պալատս ինծի խաւար դըժոխք կերեւի  
Ճարոն դողացուց մեզ նման ուռիի տերեւի  
Տարի մը ութը ամիս է ըսկըսեր ենք կըռիւի  
Արեգակն ալ երկրիս վրայ միշտ կը խաւարի
- Ճ. Ամբողջ ոտքի ելլեն քաղաքդ ու գիւղդ,  
Աշխարհէն պիտի վերցընեմ թագաւոր ցեղդ,  
Գարի, կորեկ պիտի ցանուի տունդ ու տեղդ,  
Հասարակութիւն պիտ տիրէ բոլոր երկիրդ :
- Ռ. Քրոփէդկին պաշարուած հիւսիսէն հարաւ,  
Չորս հազար զորքերս անօթի ծարաւ  
Հարիւր ութսուն թնդանօթ ճարոնը տարաւ,  
Ռուսին յոյսըն ալ անոր հետ կորաւ :
- Ճ. Թնդանօթ կարճակէ հավայէն, գետնէն  
Այսպէս պատերազմը եղած շէր աշխարհէն,  
Փորթարդը յաղթեցի ես ալ ատենին  
Ես պիտի երթամ լուր մը եկաւ Մկդինէն :
- Ռ. Չորս կողմէն հասան ճարոնի բանակ,  
Քրոփէդկինին պիտ զարնեն երկաթէ դանակ  
Ամբողջ Սիպերիա առնելու կը ջանան,  
Ութը տարի հետս կըռիւ կը բանան :
- Ճ. Դուն իմ առաջս շղթայուած հաւ ես,  
Հայերուն կալուածները շէ որ գրաւես,  
Գազան Սուլթանին հետ խօսքդ մէկ ընես,  
Եօթը հազար ժողովուրդ Սասունը ջարդես :
- Ճ. Աշխարհին վրայ եղիր դուն ամօթ երես,  
Էջմիածնայ վանքը ինչո՞ւ պաշարես,  
Աւազակի ձեռով գաճան կոտրես,  
Ութը հազար ըուպլի քու գաճադ տանես :

Generated on 2016-07-22 11:09 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0006831333  
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-google

- Ռ. Ուաշինկթընի մէջ բացուեր ահագին դատը ,  
 Ճարոնին կողմն էին տերութեանց շատը ,  
 Այս բանին մէջն էր Անգղիացուն մատը ,  
 Ինչ կը խորհի հիմա Գերմանացի վատը :
- Ճ. Չարին հատեր է գիշերուայ քունդ  
 Օդը պիտ հանեմ պալատդ ու տունդ ,  
 Ո՛ւր մնաց աշխարհի այն մեծ անունդ  
 Շուտով հիմա պիտի քանդեմ քու բոյնդ :
- Ռ. Դիրքս ու քաղաքս կառնէ ամէն մէկ օրը ,  
 Դիակներուս շատը լեցուեցաւ հօրը ,  
 Բոլոր բանակներս ինկան Ճարոնին թողը ,  
 Վերջի նամակ թող գրեն հարքեաշ իր մօրը :
- Ռ. Ինտատ կուզէ Քըրօփէկդին տասն անգամ օրը  
 Անթիւ զօրքեր օգուտ շունին իրենց մօրը ,  
 Ալ ճար մը շունիմ ընկեր եմ թողը ,  
 Չորս բանակ զօրքերս լեցուեցան հօրը :
- Ճ. Ճարոն ուսմբ հրացան դրեց իր ուսին ,  
 Արիւն կտրեց գետին , արեգակ լուսին ,  
 Բոլոր տէրութիւնները գացին ըսին Ռուսին  
 Փորթարդրէն շուտով ելիր Յուլիսին :
- Ճ. Չորապետին վրայ եկաւ կայծակէ կարկուտ ,  
 Բանակներդ օդը կը հանէ Ճարոնը անգութ ,  
 Արագ շարժիր՝ Մկդի գաւառէն փախիր շուտ  
 Երկինք ելած դիակներուդ կտորները գուտ :
- Ճ. Փորթարդրէն հազար թնդանօթ բերի  
 Կէս միլիոն զօրքերդ բռնեցի գերի ,  
 Երկու հարիւր յիսուն նաւ խորտակեցի  
 Արեւելք Ռուսաստան նամ թիքմիչ ըրի :
- Ճ. Նըչաններով Չարը հագեր հիմա քիւրք՝  
 Բայց ամօթ է որ այդ պաշտօնը առեր էք դուք  
 Ճարոն կուգայ դէմդ դուն մի կարծեր թուրք ,  
 Նիեաթ ունինք երթալ Սիպերեայէն Բեդրսպուրկ :

- Ճ. Թողոյ ճէներալ ունիմ ծովային աստուած  
 Կայծակի պէս կուտայ Ռուսին հարուած ,  
 Նաւերդ քաշեր եզերք բոլորը խորտակուած  
 Ամբողջ աշխարհը հիմա ինծի զարմացած :
- Ճ. Քորիայի նեղուցը դրած էի թող  
 Մայիս քըսանութը յանկարծ կիրակի օր  
 Չորս զօրապետ բռնեցի աչքերը կիսաքող ,  
 Դեղեր կը պատրաստեն տասնըհինգ սօքթոր :
- Ճ. Խոնարհեցաւ ինծի արեւելքէն Ասիան  
 Անունդ ելեր առջ է իբր Ռուսիան  
 Նոր անուն մը , աղուէս գլուխդ դիր սե թագ  
 Ելիր քալէ եկուր Ռուզվէլդի ձեռքը պագ :
- Ճ. Ապտակ մը զարկի որ յաւիտեան չը մոռնաս  
 Դէպի Ճաբոն նայելու շուտով պիտի լաս ,  
 Ուաշինկթընէն որոշուած է այս տուգանքը տաս  
 Ռուզվէլթին ձեռքը շոգուկ պագնել պիտի գաս :
- Ճ. Հազար ինը հարիւր չորս թուականին  
 Ռուսը ըսաւ պիտի կըլլեմ Ճաբոն , Չին ,  
 Հազար ինը հարիւր վեց թրուականին ,  
 Ամբողջ աշխարհը Ռուսին վրայ խնդացին :

## ՎԵՐՁ



Իտալացուն Ըսելիքները Թուրքին Հանդէպ

## II

### ՏԵՍԹԱՆԵՐ

(ԽԱՂԵՐ)

Հազար ինը հարիւր տասուերկու՝ Յուլիս ,  
Գերի ազգերուն տըուին աւետիս ,  
Միջազգային քաղաք պիտի ըլլայ Կ. Պօլիս ,  
Կամացկամաց աշխարհի քարտէզէն կը հալիս :

Իտալիա. Անունս ելեր գիտես՝ ես եմ մազարաթ ,  
Զօրքերդ կը ջարդեմ օրը հազար հատ ,  
Ասիկա կըսեմ քեզի թող ըլլայ խըրատ ,  
Ռուսն ու Անգղիան պիտ գան քու վրադ :

Կանչէ խօսիր նախարարներդ ու ահալիդ ,  
Թախտիդ տակէն տուր ինծի ոսկի խալիդ ,  
Ալ շեմ ուզեր Թրիպոլիս նստի քու վալիդ ,  
Շուտով յանձնէ ինծի Պօլսոյ բանալիդ :

Ռուսը հոր մը կը բորէ իր մօտ ահագին ,  
Հոտ տեղ ո՞վ պիտի թաղես կըսէ Անգղիացին ,  
Պարզ է աշխարհի վրայ կըսէ Գերման խելացին :  
Հոտած թրքի մը պիտ թաղենք կըսէ Գաղիացին :



Ագռաւը ըսկըսաւ եկաւ սև ծովէն ,  
 Ելտուզը պիտ փախցընէ քու թախտիդ մօտէն ,  
 Գուրանը պիտ հանէ Այա Սօֆիայէն ,  
 Խաչ մը պիտի տնկէ Իտալիացիէն :

Ասիայի վրայ բացուեր է մեծ պատերազմը ,  
 Անօթի են զօրքերդ՝ ալ չունին կազմը  
 Եփէ , առաջները դիր կարմիր խազ մը ,  
 Տե՞ս ինտոր պիտ ընեն հետս մեծ պատերազմը :

Կայծակը զարկեց Այեա Սօֆիայի գմբեդին ,  
 Ամէն Տաճիկ վախուռն նայեցաւ իր ետին ,  
 Հեռագիր մը եկաւ Տաճկաց մեծ պետին  
 Հաւաքեց զօրքերը Պաղտատ , Մըսըր ու Մերտին :

Ինչ լուր առիր Անգղիացուն մեծ տանը ,  
 Ետեդ ընկեր , ճին կամ ինչ է շէյթանը ,  
 Ականջիդ տակը բան մը ըսաւ Ռուսին դեսպանը ,  
 Անգղիացին ըրաւ բոլոր այս խրթին բանը :

Արմատը կտրեցի հիմա քու ծառին ,  
 Իսլամ ժողովուրդդ ալ ո՞ւր պիտի թառի ,  
 Պօլսոյ դուռը բաց է կը վախնան Սառէն ,  
 Սև ամպերու մէջէն կայծակ կը վառեն :

Թող լըսէ աշխարհը նեղուցը բացի ,  
 Նոր Սուլթանին ու իր շէյխին քով գացի ,  
 Ձեր գըլուխը հաւուն բունը բռնեցի ,  
 Տարտանէլ ես ուրմբակոծեցի :

Բռներ ես Գուրանին պոչը չունիս զարգացում ,  
 Զօրքերուս աչքերը հանեցիր չունիս ըզգացում ,  
 Առ աւետարանը , ձեռքդ պիտ տայ մեծ ուսում ,  
 Քրիստոս ժամանակին մեզի այսպէս էր խօսում :

Եկուր նորէն ծունր կրկնէ մեր խաչին ,  
 Զըգէ կրօնքդ հաւատա մեր Քրիստոս քաչին ,  
 Զորս խաչապաշտ եկան ուժերը վրադ փորձեցին  
 Զորս գազան վերջը պիտ գան մորթդ փախցնեն :

Բացուեցաւ նեղուցը ու Չանաք Գալան ,  
 Եւրոպացին պիտ տայ շուտով քու պէլան ,  
 Ջարդեցիր Հայերը դուն ըրիր թալան ,  
 Կուգայ Հայերուն ձայնը դեռ հիմա կուլան :

Հայեր գացին ըրին Պապը Ալիին ցոյցը ,  
 Աչքը բացեց ելաւ խառնակիչ օձը ,  
 Մեծ ումբ մը պահած էր միշտ իրեն ծոցը ,  
 Նետեց Հայ աշխարհին հանեց կրրակն ու բոցը :

Ոմանք գացին եղան Աստուծոյ բարձը ,  
 Աստուած ալ տուեց իրենց այս առաջարկը ,  
 Գացէք ըրէք Համիտին շուտ մահափորձը ,  
 Հերիք ապրի աշխարհին վրայ այդ շարագործը :

Չորս կողմէն լեցուեցաւ Պօլիս մէպուսան  
 Անոնք իրենց թագաւորութիւնը մընալ կը յուսան  
 Ի՞նչու շեն բռներ բերեր լեռան գող Մուսան  
 Պատրիարքարան այս բաները ամէն օր կը խօսան :

Ըսկըսար ամէն օր կը հանես իրատէն ,  
 Կը լուծես մէպուսանները կը քըշես էատան ,  
 Տասուերկու գլուխ ունի Իտալի տէտէն ,  
 Տըրիպօլիսի կըցումը եղաւ նոր մոտան :

Դուն բեր ճէնկ քիթապդ ու պաշտած Գուրան ,  
 Մենք ալ բերենք մեր Սաղմոսն ու Աւետարան ,  
 Հայ գիտունները ատոր վըայ շատ երկար խորհան :  
 Մութ ճամբան քալէ տեսան քու պաշտած Գուրան :

Քընուկ էի տեսայ մի պայծառ երազ ,  
 Մէկը ինծի ըսաւ մէկ երկու առած ,  
 Տեսայ երկնքէն մէկ աստղ մը թըռաւ ,  
 Գընաց Իտալացուն աստղին մօտ թառաւ :

Երսուներկու տարի թագաւորեցիր ,  
 Երիտասարդ ատենդ երկաթ ծամեցիր ,  
 Հայ ազգին արիւնը դու միշտ խըմեցիր ,  
 Եւրոպացւոց աչքին թօզ մը փըշեցիր :

Շատեր վախցան Մայիսի երևցած աստղէն,  
 Եկաւ Սուլթան Համիտը իջուց իր թաղթէն  
 Հրեշտակի թուր մը գողցած էր վախթէն  
 Զարկեց Հային որ՝ աշխարհի շորս կողմը գաղթեն :

Աստղէն քաշուած վարագոյր մը տեսան հիւսիսէն :  
 Գոցեց լուսնին ճառագայթներ բոլոր աշխարհէն :  
 Գողութիւն ըրաւ Մուհամէտ, դրախտի պարտէզէն  
 Թուրք տէրութիւնը պիտի վերնայ քարտէսէն :

Լեցուեցաւ ժամանակը քսաներորդ դարուն  
 Թուրք և Իտալացուն եղաւ հաշտութիւն,  
 Վերջապէս Իտալացին նստաւ Պէնկագին  
 Միւս տէրութիւններն ալ կուզեն իրենց բաժին :

## Վերջ



# Թուրքին Բսելիքները Խտաւացուն Դէմ

## ՏԵՍԹԱՆԵՐ

(ՅԱՂԵՐ)

### III

Աշխարհին կեդրոնն է Պօլիս նըստեր եմ անգին ,  
Եօթը լեռան վրայ շինուած է առաջին կարգին ,  
Տիեզերական պատերազմ կ'ուզէ թող ծագին ,  
Թրիպօլիս շեմ տար անհոգ եղիր այդ մասին :

Սըրով առած եմ պէտք է կործանենք սըրով  
Կօստանդին թաղդէն իջուցինք մենք բուռն զորով  
Սյս բան եղաւ Օսմանցիին թագաւորին օրով  
Եւրոպացին ալ առաւ մէկ սարսափ դողով :

Հին ժամանակ Օսմանցին ակռայ մունէր խածան ,  
Իր պալատին վրայ կը ծագէր զինուած ծիածան ,  
Ասիա ու Եւրոպ այս բանին վըրայ հիացան ,  
Տասուերկու թագաւոր գահերնուն տակ մըտան :

Աշքերդ գոցուած մըտար Պօլսու դըռան ,  
Հազար ոռմբ թափուեցան քու նաւուդ վըրան ,  
Կը ջարդեմ իտալացին ձրգեր եմ սըրան ,  
Խորտակուած նաւերդ քաշեցիր ատան :

Գուն շես տեսներ Տաճկին զարկած կայծակին ,  
 Շարուած ուումք Պօլսոյ ծովուն յատակէն ,  
 Հայ մը եղեր նախարար գործոց արտաքին ,  
 Կը տեսնես այսօր-վաղը երեսիդ եկած ապտակին :

Չորս կողմէն եկան Փէրմաններ Պօլիս ,  
 Ըսկըսաւ կը խորհի ամբողջ ահալիս ,  
 Հաւաքուեցան շէյխերս ու բոլոր վալիս ,  
 Բաժանում կայ կըսեն իմ ամբողջ մալիս :

Իթիլաֆ ու իթիհատը միշտ կը կանչեն իր բեմէն  
 Մէկ Հայ զօրքս քու քառսունիդ դէմ են ,  
 Նըշան է այն քաջութեան իրենց դիմագիծէն ,  
 Սընուցուած են մաքուր կաթով Հայ մօր ծըծէն :

Սուր մը օրհնեց տըուեց մեզի Մուհամմէտ ,  
 Սանճաքը Շէրիֆը առեր կապեր իմ միլլաթ ,  
 Տրիպօլիս հանեցիր մեր դէմ արիւնոդ խամադ  
 Նստեր ես դէմս սըխալ կը շարես քու տամադ :

Խաղաղական ժողովը աշխարհի շորս կողմ երեցաւ  
 Ամէն ազգին խելացիներէն էին ըսուեցաւ  
 Պատերազմի վերջը պիտի դնեն այսպէս խօսեցան :  
 Երկրագուդին շորս կողմը նորէն արիւն քսուեցան

Սև ծովուն եզերքը նստեր եմ խաղը ,  
 Արջ Առիւծ և վագր կը քաշեն մալտ  
 Իտալացին անդին կըլլեց Պէնկագը ,  
 Պօլսու նախարարները զարնեն իրենց հին սագը :

Ոսկի արծաթ շինուեր բոլոր իմ թախթը  
 Պօլսոյ տեսարանն է հոգւոյս դրախտը  
 Ալ շըկայ ժամանակ անցեր է վախթը  
 Շամ պիտի ըլլայ կերևի մեր վերջի գաղթը :

Ըսկըսար աղօթքներ , կընես պատարագ ,  
 Գերմանացուն թագաւորը քովդ եկաւ արագ  
 Մեծ Փէրման մը եկաւ , Պապըալին տարանք  
 Գիշեր ցորեկ խորհէինք բոլորս մեռանք :

Արջ և առիւծ եկան Պալթիկ ծովուն մօտ ,  
Աշխարհին վրայ հանեցին մէկ լէշի մը հոտ ,  
Վայ ինձի որ շունիմ խոշոր թնդանօթ ,  
Պատուական բանակս կը հանեն դէպի օդ :

Լալէն աչքերը կուրցաւ հիմա մեր մօրը  
Որչափ երկար տեւեց մեր ծոմը այս տարուայ ,  
Պիտի ըլլայ որ տեսնենք լուսընկին նորը  
Ուտենք ու աղօթենք Մուհամմէտ հօրը :


Եռսուն օրը անցաւ ալ լուսինը չի նորեց  
Պօլսոյ վրայ աստղիկ մը ինկաւ շորս կողմը խորեց  
Իտալացին սկըսաւ , Պէնկագին տիրեց  
Բոլոր թագաւորներու խօսքը իրարու մօտ բերեց :

Լոյս մը չծագեց ան երկնքի կամարէն  
Որ դրախտը շինուած է փայլուն քարէ մարմարէ  
Կը վախնամ թէ զիս հանեցին ան երկնքի տոմարէն  
Մեր ճրագը հոն կը վառէր այս օր վաղը կը մարեն :

Երբ Իզմիրլեան ու Հայրիկ մեռան գընացին  
Աստրծու առաջը մեծ դատ մը բացին ,  
Կանչեցին Մուհամմէտ ու Հաւրէթը Ալին ,  
Պահանջ դրրեր ենք մեր կողոպտուած մալին :

Անոնք իրենց փառքը գըտան Աստրծու քով  
Ըսին աշխարհին շորս կողմը եղաւ արիւնի ծով  
Աստուած տրուեց բանալին "պահեցէք ձեր քով ,  
Թուրք անունը տոմարէն հանեցէք ձեր ձեռքով" :

Վերջ



# Հայրիկ Դրախտին Մէջ

## ՏԵՍԹԱԿՆԵՐ

(ԽԱՂԵՐ)

### IV

Երբ Հայրիկ դատը շահեցաւ ելաւ քալեց դրախտը  
Տեսաւ որ ազգերու ճրագներ հոն տեղ կը վառէր շատ մը  
Ըսաւ ա՛հ ինչ մաքուր է օդ , ասոր կ'ըսեն նրմալըր վոն  
Թուրքի ճրագ աչքին երեցաւ զարկեց ըրաւ ցիր ու ցան

Երբ արեւելեան կողմ դարցաւ սեղանատուն մըտաւ  
Աչքը ըրա՛քքը նետեց շատ հին ճրագ մը գտաւ ,  
Անոր վրան նայեցաւ շատ հին Հայու գիր գտաւ  
"Այս էր փնտռածս" մաքրեց ու ծոցը դըրաւ :

Այսպէս է դրախտին կեանքը ճրագը դրեց անոնց կարգը  
Կանչեց լուսարարն ըսաւ ես եմ դրախտին հէտ մէնը  
Շուտով քալէ գնա առ ձեռքդ քու իւղիդ քէնը  
Ճրագները համրէ վաթսունը մէկերորորդն եղ լից՝ Հայուն  
[Ճրագը :

Դրախտին բոլորը ճաղ պիտի քաշեմ ասի ինծի կուտ լըք է  
Շուտով վագէ վաթսուն մէկերորորդ ճրագը շէլըգէ  
Թուրքին լուսը հիմա շատ գէշ պատ լըք է  
Ովկիանոսի վրայէն կը քալէ իր հեծածը քէլաք է :

Լուսարարը կորսուեր է գացի որ կը խաղա խումար ,  
ինչ է կընէ նստեր սա աչխարհի մեծ յիմար  
Չորս տարի է որ կը փնտռեմ սա դրախտին տոմարը  
Դուն գիտես որ իմ վրայ կայ մեծ արծիւի տամարը :

Լուսարարը նորէն չի գար գացի որ կուտէ կերակուր  
Հիմա գլխուդ վրայ բերեմ հրեշտակէ մէկ թապուր  
Շուտով անցիր ասկէ գնա Հայուն ճրագը կըպուր ,  
Հին տոմարը կուզեմ շուտով ինծի տուր :

Հարաւային կողմը դարձաւ տեսաւ մարդ մը նստեր է  
 Կարկուտն անձրևը զարկեր սաստիկ մսեր է  
 Ձեռքը քոր շախու մը կար ան ալ կորուցեր է  
 Մեր ճրագը կորսուեր է ասի Հայրիկին ըսեր է :

Հիւսիսային կողմը դարձաւ տեսաւ մարդ մը նստեր էր  
 Ձեռքը շորս բերնէն շախու մը կար կը սրէր ,  
 Դուն տեսար որ մարդ մը անդին նըստեր է  
 Պալքանն եմ մըսած մարդը պիտ մորթեմ աս Հայրիկին  
 ըսեր է :

Հ. Լուսարար , քեզի կըսեմ վարի աշխարհէն ինչ խապար  
 Լ. Նոր Լոյս մը զրկեր է քու անուան Պօղոս փաշա Նուպար  
 Հ. Օ՛ ես անի լաւ կը ճանչնամ շատ բարձր մարդ է քիպար  
 Աչքս լուսէ որ հիմա պիտի ելլեմ բռնեմ պար :

Լ. Աշխարհին շորս կողմը կտրեր է արիւնէ ճիհան  
 Պօղոս փաշաին կ'օգնէ Եպիսկոպոսն Ութիւճեան  
 Հ. Օ՛ , անի ես եմ օծեր , ան է իմուն հոգուս ճան  
 Այս քէյֆին վրայ Լեցուր որ խըմեմ մէկ երկու Փինճան :

Հայեր ելէք շուտով առէք ձեր Հայաստանն ու Ղարսը  
 Աշխարհին վրայ եկաւ Հայկական հարցը  
 Բերան առեր Թուրքին վրայ կը վազէ արեւելքի արջը :

Հայրիկ գիտես ինչ է ըրեր արեւմտեան առիւծը ,  
 Ձեռքը առեր Հայերուն ծանր լուծը ,  
 Պարսկաստանէն Պօլիս կը նետէ իր ակռային մէկ խածը ,  
 Աշխարհը կը վառէ բերնէն ելած մէկ կայծը :

Վերջ





**Թուրք և Պալքաններու Փոխադարձ  
Պատասխանները**

**ՏԵՍԹՆՆԵՐ  
(ԽԱՂԵՐ)**



**Պալ . Վիշապ մը կը մռնջէր՝ կորուսեր իր տունը ,  
Չորս տեսակ էր բոլոր ակռային թոյնը  
Պուլկար , Գարատաղ , Սերպիա , Յոյնը  
Երկար ատեն է փախուցեր են իրենց աչքին քունը :**

**Թ . Չորս տէրութիւն վրէս քալէք , բռնեցիք նեղը  
Նազըմ փաշան կը կըլլէ զձեզ եղեր է փիղը  
Մինչև չի վերնայ Աբրահամի Իսմայիլ ցեղը  
Չի տար ձեզի որ առնէք ձեր ուզած տեղը**

**Թ . Սև ծովէն արծիւ մը երեցաւ կը փայլէր մազը  
Վեց տեսակ եղանակ ունէր իր ձեռքին սազը  
Տէրութիւններն ալ սկսան իրենց խաղը  
Քիչ մնաց որ ըլլար ընդհանուր մեծ պատերազմը :**

**Պ . Զմրուտ խուշի մը եկաւ աչքերը վառէր  
Ութ ամիս էր Թուրք պալատին վըրայ կը թառէր  
Արևելքէն արևմուտք հիւսիս հարաւ կը քալէր  
Սիրած անդս Կ . Պօլիսն ինծի մալ էր :**

Թ. Ձինադադար կրնիքը առեր է նազըմ փաշան ,  
կը վազէ կը ցատկէ այս քոշաէն այն քոշան ,  
Խաղ կը կանչէ առեր ձեռքը քէմանան ,  
Հիմա կելլէ ձերքէս կերթայ Չաթալճան :

Պ. Եթէ գայ երկնքէն ձեր Ֆաթմա ճէճան  
Ալ երբէք ետ շեմ տար ձեզի Չաթալճան ,  
Վար կը ձգեմ եթէ մընարան ելլէ ձեր խօճան  
Որ գըլուխը կապեր կարմիր կանանչ ալաճան :

Պ. Քար մը զարկի կոտրեցի Թուրքին գըլուխը  
Փախաւ Անգղիացուն հոն տեղ առաւ սոլուխը  
Երբ մընա դուն պիտ անցնիս ջախջին օլուխը  
Ջուր կը ցանես գօրքերուդ մէջ , վրադ կախեր ես  
[Թուլուխը :

Ռ. Չարը կայներ կըսէ մէկ խորհուրդ խորհին  
Անգղիացին ըսկըսաւ կաղօթէ ու կը խորհի  
Գըլուխը բան մը կայ ելլելիք բոլոր աշխարհին  
Օղ մը պիտի կախենք ականջը Գերման կայսրին :

Գ. Գերմանացին ըսկըսաւ շարական մը կըսէ  
Իրեն սըին ծայրը արիւն կը քըսէ  
Անգղիացուն գացէք ըսէք Ռուսն իմ պօսօս է  
Պօլսոյ շորս կողմերը արիւն կը հոսէ :

Ա. Անգղիացին կարդաց իրեն Սուրբ Գիրքը  
Աշխարհի վրայ կը բռնեմ ամենէն մեծ դիրքը  
Ձեռքերնուս մէջն է աշխարհն ու տիեզերքը  
Աստուած ինձ է յանձներ հըրեղէն կառքը :

Ա.Ա. Գաղտնի խօստըվանանք մը ըրաւ Աւստրիացին  
Գերմանացին ինձի եղաւ հըզօր դըրացին  
Այս բաները գացէք ըսէք Ռուսի Չարին  
Ասոնք իրենց սըրին ծայրը բոլորին ցուցուցին

Թ. Թուրքը կըսէր , իր տէր Ամենակալը ,  
Աստուած , դարվար նայիր ինչ է մեր հալը  
Պօլսոյ վըրայ կառնէ Պալքանեան իր քայլը  
Բերանին բաց վրանիս եկան շորս գայլը :

Ի. Իտալացին առաջ ըսաւ իր տաղը  
 Երկու փէշկիր առեր ձեռքը կընէ իր խաղը  
 Դրրիպօլիս հարսանիք կընէ այս օր կամ վաղը,  
 Թուրքը կամչնայ երեսին բռներ շարմաղը:

Պ. Պալքանեան առեր կըսէ իր երգը  
 Լեռայ մը շափ լեցուց իր պատուական բերքը  
 Դուն ալ պէտք է գիտնաս Ռուսին յարգը  
 Բեր որ Ձարը նստի քու ոսկի կառքը:

Այսպէս վերջացաւ եկեղեցիին եօթը իմաստը  
 Բերին որ բաժնեն բոլորին մասը,  
 Պալքանն ըսաւ մենք ենք կարդացող միշտ դասը  
 Պէտք է մեզի յանձնէք այդ բոլոր մասը:

Հայ. Հայ կաթողիկոսը կըսէ առէք ու կերէք  
 Բոլոր խնդիրներս Ռուսին Ձարէն հասկըցէք  
 Բոլոր դեսպանները իրարու քով բերէք  
 Վաթսուն ու մէկերրորդ յօդուածը ձեռք առէք:

Գաղիացին կընէր իր հաղորդութիւն,  
 Հրամցուց որ գան առնեն ամէն տէրութիւն,  
 Ձեռքը մաքրեց ըրաւ նոր մըկրտութիւն,  
 Թուրք և Պալքաններուն եղաւ հաշտութիւն:

ՎԵՐՁ



# Ս Ի Ր Ե Ն Ե Բ Ե Կ Ը Ն

## ՏԵՍԹԱՆՆԵՐ (ԽԱՂԵՐ)

### VI

Փայլուն շարուած փամփուշտներդ ես տեսայ քու սուրը  
Հրացանդ շալկած կը վազէիր ալ յոգնեցաւ քու ուսը  
Պատերազմի կարմիր դրօշը պարզած էիր ան քու յոյսը  
Գարնայ ելած նսր փուս մըն եմ ես ալ եղայ քու յոյսը :

Աշխարհը արդէն սիրուհիի մը վրայ կը դառնայ  
Ամէն նըուիրական բան մինչև իր մահըն ալ կը մոռնայ,  
Պատերազմին դաշտին վրայ սուրն ու սովը կ'սպառնայ  
Ամէն մարդ ալ կ'ուզէ իր սիրածը շի մոռնայ :

Լաւ աշովդ նայիր իմ զօրքերուս հասակը  
Ու փամփուշտ, վարդագոյն սև աչքերով տեսակը  
Կիւրծիի աղջիկներուդ հետ պիտի ընեն պսակը  
Թող որ մտնանք Պօլիս լեցուն է մեր քսակը :

Ձեռքէս ձգեցի սուրը՝ գետնէն առի իմ սազը,  
Սիրուն հրեշտակ եկուր սանտրեմ քու մազը  
Արևը ծագեց երբ ես բացի քու խազը,  
Քաղցրէզէն բա՞ն մը կերար վայ ես սիրեմ քու Հազը :

Ես շեմ տար քեզ օտարին երբ տան ինծի աշխարհը,  
Պահած ես կուրծքին մօտ երկու կարմիր խնձորները  
Արևը կը ծագի նորէն երբ մտնէ իր մարը,  
Կը վերցընեմ քու շարսաֆըդ կ'ըսեմ գտած եմ եարը :

Թրքուհիներ ունին սև աչքերով կլոր թուշ  
Կուրծքերէն կը բղխի մեղր ու կաթն անուշ,  
Բերանդ դընեմ շաքարէն շինուած երկու նուշ,  
Նման պիւլպիւլի ինծի եկուր սիրուն խուշ :

ՎԵՐՁ


## Ե.ՉՆԻԻ ԸՆԹԵՐՑՈՂ

Դուն բեր մեզի ամեն տեսակ Տպագրութեան գործ, այցետոմսէն սկսեալ մինչև լրագիր: Հայերէն և Անգլիերէն կը տպենք մեր ելեքտրաշարժ մեքենաներու վրայ: Ինչպէս տպեցինք այս գրքոյկը և Քալիֆորնիոյ Հայ Քրիստոնէական Գլխից Ընկերութիւններու () օրգան «Գլխասէր» լրագիրը՝ մաքուր, ճաշակաւոր և քրտակի յարմար գնով: Այցելեցէք տեսնելու Քալիֆորնիոյ միակ ելեքտրաշարժ Հայ Տպագրատունն և Վազմատունը հոգ չէ թէ մեզ կը քաջալերէք կամ ոչ:

ՌՈՒԲԷՆ Ն.ԱՄԻՐԻՆԱՆԵԱՆՑ

Տպարանապետ

1926<sup>1</sup>/<sub>2</sub> Kern St., Fresno, Cal.




## ԿՆԲԵՒՈՐ

**Մեր հրատարակութեան երկրորդ պրակը պիտի ըլլայ այս համաշխարհային պատերազմի վրայով, այսինքն - ներկայ կուտղ ազգերու մասին-:**

**Նաև անոնք որ կը փափաքին ունէ ոտանաւոր կամ խաղերու շարադրութիւն մը ունենալ թող հաճին մեզ ուղարկել տեղեկութիւն մը գրուելիք նիւթին վրայ. և մենք կը պատրաստենք խիստ գոհացուցիչ գնով:**

**A. ONANIAN,  
Home Market,  
Fowler, Cal., U.S.A.**





UC SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY



**AA** 000 683 133 3



Generated on 2016-07-22 11:24 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa006831333  
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access\_use#pd-google